# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մայիսի 2018 թվականի N 67-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Նախկին Պտղնի այգետարածքի թիվ 11 տեղամաս հասցեում գտնվող Մակար Ռուբենի Խաչատրյանին պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /հիմք՝ արխիվային տեղեկանք Հ-9809, տրված՝ 2018 թվականի մայիսի 16-ին, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0224-0036/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 15-րդ փողոց N 23 այգետնակ:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի մայիսի 21
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2018 թվականի N 68-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Գ. Գետամեջ 9-րդ փողոց թիվ 21 հասցեում գտնվող Արման Մանուկի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2804981, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0217-0026/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 9-րդ փողոց N 38 այգետնակ:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2018 թվականի մայիսի 22
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2018 թվականի N 69-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա)» և «բ)» ենթակետերով, 18-րդ կետի «դ)» ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Օրինականացնել Արման Մանուկի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 9-րդ փողոցի 38-րդ հասցեի բնակելի կառուցապատման (այգեգործական) հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0217-0026) 2014 թվականին ինքնակամ կառուցած բնակելի տունը՝ 132,6 քառակուսի մետր, ամառային խոհանոցը՝ 44,3 քառակուսի մետր, լողավազանը՝ 4,4 քառակուսի մետր և պարիսպը՝ 14,1 քառակուսի մետր արտաքին մակերեսներով, շինության նկուղում առկա՝ ինքնակամ բացված 1 հատ պատուհանը, 1-ին հարկում առկա՝ ինքնակամ բացված 1 հատ պատուհանը և 1 հատ բացվածքը (դուռ):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ինքնակամ շինությունների օրինականացման վճարները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) այգետնակի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 1 300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ.

2) օժանդակ շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 780 (յոթ հարյուր ութսուն) դրամ.

3) ինքնակամ բացված յուրաքանչյուր դռան և պատուհանի համար՝ 1 300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ:

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված՝ ինքնակամ բացված 2 հատ պատուհանը, 1 հատ դուռը և 195,4 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսներով ինքնակամ շինությունները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի համայնքապետարանի 900115112063 հաշվեհամարին վճարել 225 270 (երկու հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր յոթանասուն) դրամ:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2018 թվականի մայիսի 22
գ.Գետամեջ